05/10203-17
1/17-7/8661-17

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 834 -Ն

«07» օգոստոսի 2017 թ. ք.Երևան

### ԼԵՌՆԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված փրկարարական ծառայության կանոնագրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N259-Ն որոշմամբ հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կանոնադրության 16-րդ կետով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել Լեռնափրկարարական աշխատանքների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետին՝ սահմանված ժամկետում ու կարգով ապահովել սույն հրամանի ներկայացումը ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Դ. ՏՈՆՈՅԱՆ

CoSign

2017 թվականի_______________ «____»

ք.Երևան